ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «18» Սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 09-18-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130** ծածկագրով (դեղորայք) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Ս. Թարոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հ և ԱՏ Տեսչության պետ.
Մ. Բոզոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հ և ԱՏ Տեսչության տեսուչ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արկադի Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արկադի Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Անհատական վիրակապման հականեխիչ փաթեթներ	13 500
2.	Վիրակապ /բինտ/	18 000
3.	Բամբակ	15 000
4.	Ճնշման ապարատ	7 000
5.	Սանտավիկ	5 400
6.	Շնչադիմակ (респиратор)	6 000
7.	Պաշտպանիչ դիմակ	41 500
8.	Պատգարակ	40 000
9.	Նոշպա	12 000
10.	Անուշադրի սպիրտ	1 500
11.	Կատվախոտի թուրմ /վալերիանա/	7 500
12.	Վալերիանի հաբեր	4 500
13.	Վալիդոլ	2 000

14.	Անալգին սալիկներով	1 500
15.	Ասկոֆեն	5 000
16.	Լոպերամիդ	2 700
17.	Պարացետամոլ	4 500
18.	Կապտոպրիլ	12 000
19.	Յոդ	10 500
20.	Կալիումի պերմանգանատ	4 500
21.	Ջրածնի պերօքսիդ	6 000
22.	Բորաթթու	900
23.	Ակտիվացված ածուխ	3 000

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի սեպտեմբերի 09-ին, ժամը «17:45»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	-	aida.trade@yandex.ru
2	Մարգ Ֆարմացիա ՍՊԸ	Դրօ 15-51	marg_pharmacia@yahoo.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
2	-	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	11 250	11 250
4*	-	Մարգ Ֆարմացիա ՍՊԸ	12 000	12 000-
	-	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	10 000	10 000
7	1	Մարգ Ֆարմացիա ՍՊԸ	13 280	13 280
	-	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	12 450	12 450
8*	-	Մարգ Ֆարմացիա ՍՊԸ	130 000	130 000
11	-	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	4250	5100
21	-	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	1875	2250

*տվյալ չափաբաժինների մասով (4-րդ, 8-րդ) վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Արկադի Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար:

2. «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 2-րդ,4-րդ, 7-րդ, 11-րդ և 21-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել,քանի որ մասնակցի կողմից Հավելված 2-ը ստորագրված չէր էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ինչպես նաև ներկայացված գնային առաջարկում կար անհամապատասխանություն:

3. Ընթացակարգը 1-ին, 2-3-րդ, 5-6-րդ, 9-11-րդ, 12-23-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին, 2-3-րդ, 5-6-րդ, 9-11-րդ, 12-23-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

4. Նիստը 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով կասեցնել 5 աշխատանքային օրով: /բանակցություն/

5. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ին միաժամանակյա բանակցությունների մասին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի գնային առաջարկները գերազանցում են ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/130 ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ և 8-րդ չափաբաժիններով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չներկայացավ բանակցություններին:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով մասով առաջին /և հաջորդաբար/ տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

2. Ընթացակարգը 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, և հաստատել ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/83 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Թարոյան _____

Մ. Բոզոյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____